NERSISYAN GEGHANUSH
6208780233

Հաստատում եմ՝
«ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մ. Ղազարյանի անվան №2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

Տնօրենի պ/կ՝ _____ Գ. Ներսիսյան

01.09.2023

«ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ Մ. ՂԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ №2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ուսումնական տարի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

2023-2024 ուստարվա հիմնական նպատակները և խնդիրները 5

Դպրոցի հիմնախնդիրների լուծման ուղիները, պատասխանատուներն ու կատարման ժամանակացույցը 5

Մաս 1. Պարտադիր կրթության իրագործման աշխատանքային պլան 8

Մաս 2. Կրթադաստիարակչական աշխատանքներ 16

Մեթոդմիավորումների կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները.. 16

Դաստիարակչական աշխատանքներ..... 17

Դաստիարակչական աշխատանքների նպատակները և խնդիրները 18

Հայրենասիրական, ռազմահայրենասիրական, բարոյահոգեբանական դաստիարակություն 19

Մաս 3. Առկա ուսումնական աշխատանքային պլանավորումը և պազմակերպումը 24

Նախագծային աշխատանքների աշխատանքային պլան 25

Ինչպե՞ս կազմել նախագծեր 25

Մաս 4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանով աշխատանքներ 27

Անհատական ուսուցման պլան՝ ԱՈՒՊ 27

Ու՞մ համար է մշակվում ԱՈՒՊ-ը 27

Ինչպե՞ս են մատուցվում ԱՈՒՊ-ում նախանշված ծառայությունները 28

ԱՈՒՊ-ի կազմման 28

ԱՈՒՊ-ի իրականացումը 28

Մաս 5. Ներդպրոցական վերահսկողության համակարգ 30

Ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդպրոցական վերահսկողության համակարգի նպատակները 30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ հանրակրթության մասին» օրենքով հանրակրթական դպրոցի գործունեության նպատակը անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է: Դրա համար շատ կարևոր է, որ սովորողը գիտակցի, որ գիտությունը, արդի տեխնոլոգիաները կրթության մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում: Ժամանակակից աշխարհում գիտական նվաճումներին տիրապետելը ոչ միայն կարևոր է, այլև անհրաժեշտ: Ազգային, քաղաքական, տնտեսական որևէ խնդիր լուծում չունի առանց կրթության: Ամեն ինչ սկսվում է կրթությունից և վերջանում կրթությամբ:

Արագ փոփոխվող աշխարհը իր անմիջական ներգործությունն է ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Այսօր առավել քան երբևէ, որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու և տեղաշարժվելու կարողությունը:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից (23.08.1990) հետո մեր պետությունը շարժվում է ժողովրդավարության ճանապարհով: Իմ կարծիքով այս գործոնը նույնպես արժևորում է կրթության դերը: Մարդը հռչակվում է բարձրագույն արժեք՝ իր իրավունքներով, ազատությամբ և արժանապատվությամբ: Այստեղ հանրակրթական դպրոցի խնդիրն է սովորողի մոտ զարգացնել համակեցություն, հանդուրժողականություն, համագործակցելու կարողություն և այլ որակներ: Շատ կարևոր եմ համարում նաև ազգային դաստիարակությունը:

Մենք սերունդն ենք մի ժողովրդի, որ դեռևս վաղնջական ժամանակներից կարևորել է հայրենիքը, մշակույթը, դպրոցը, գիրն ու գրականությունը, որոնք նպաստել են սերունդների կրթությանը, դաստիարակմանն ու հարատևմանը: Ես՝ որպես հայ մարդ և մանկավարժական համակարգի աշխատող, կարևորում եմ դպրոցի դերը և կարծում, որ պետք է որդեգրել այնպիսի ծրագրի ռազմավարություն, որի գլխավոր ուղղությունը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես ակտիվ, աշխատասեր, գործունյա և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի զարգացումն է: Պետության և ազգի կայացման, հզորացման գործում շատ կարևոր է ազգային-պետական մտածելակերպ, քաղաքացիական կեցվածք ունեցող, սեփական երկրի ճակատագրով մտահոգ, կյանքի դժարություններին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Այս գործոններով պայմանավորված հանրակրթության ոլորտում անհրաժեշտ է դառնում ուսուցման ավանդական մոտեցումների հետ միասին ստեղծագործաբար մոտենալ կյանքի առաջադրած խնդիրներն, կատարել որոշակի կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, շարունակել բարձրացնել ՏՀՏ-ի դերը կրթական համակարգում:

2022-2023 ՈՒՍՏԱՐԿԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակները. Իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման հիման վրա սահմանվել են զարգացման ծրագրի նպատակներն ու համապատասխան խնդիրները:
Դպրոցի զարգացման ծրագիրը կոչված է ապահովելու դպրոցի բարեփոխումների նպատակով առանձնացված հետևյալ խնդիրների լուծումը /նպատակների իրականացմանը/՝

- ✓ Դպրոցի նախագծային թերությունների վերացում
- ✓ Ուսման արդյունավետության բարձրացում՝ վերապատրաստումների, տարբեր ծրագրերի մեջ ընդգրկվածությամբ, մոտիվացիայով, խրախուսման ճիշտ մեթոդների կիրառմամբ
- ✓ դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում, ամրապնդում,
- ✓ արտաբյուջետային միջոցների հոսքեր ապահովելու նպատակով համապատասխան քայլերի ձեռնարկում
- ✓ ժամանակակից մեթոդներով և տեղեկատվությամբ կրթական գործընթացի համալրում, ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման մակարդակի բարձրացում
- ✓ մանկավարժական լավագույն փորձի ներդրում,միջազգային փորձի ուսումնասիրում և համագործակցություն

ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Առկա Հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատուներ	Կատարման ժամանակացույց	Հնարավոր վտանգներ
Հոգաբարձուների խորհրդի բացակայություն	1.Ծնողական խորհրդի, դպրոցի նախկին շրջանավարտների, համայնքի օգ-նությամբ, հնարավորության դեպքում ստեղծել հոգաբարձուների խորհուրդ	Տնօրեն, ԾԽ, Կառավարման խորհուրդ	2022-2026թթ.	Համայնքի պասիվություն
Աղքատ նյութատեխնիկա-կան բազա	Դիմել լիազոր մարմնին, անհատ բարերարների՝ խնդիրը լուծելու խնդրանքով:	Տնօրեն, Տնօրենի ուս. գծով տեղակալ, լաբորանտ	2022-2026թթ.	Մարզում նման կարիքներ ունեցող դպրոցների մեծ թիվ
Աշակերտական խորհրդի գործունեության ակտիվացում	Ուսումնասիրել հանրապետությունում գոյություն ունեցող փորձը, Իրականացնել ԴԱԿ վերապատ-րաստում, Կազմակերպել աշակերտական խորհրդի վերապատրաստում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, ԴԱԿ	2023-20224թթ.	Վերապատրաստումներ կազմակերպելու փորձի բացակայություն
Արտաբյուջետային միջոցների հոսքի բացակայություն	Հնարավորության դեպքում իրականացնել ձեռնարկատիրա կան գործունեություն և ստացված շահույթն օգտագործել դպրոցի կանոնադրական	Տնօրեն, Տնօրենի տեղակալներ, դասղեկներ	2022-2026թթ.	Ֆինանսական միջոց-ների բացակայություն, ձեռնարկատիրական գործունեության իրակա-նացման դժվարություն

	խնդիրների իրագործման նպատակով:			
Ուսուցիչների նկատմամբ խրախուսման և տույժի կիրառման բացակայություն	Իրականացնել պաշտոնի նկա-ռագրով սահմանված պարտա-կանությունների կատարման դեպ-քում խրախուսման գործողություններ /պատվոգրեր, դրամական պար-գևներ, պաշտոնական աճ/, Վարչական տույժի կիրառում՝ օրենքով սահմանված կարգով	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, ծ/խ, ա/խ	2022-2026թթ.	Ծագած խնդրի մասին անբավարար տեղեկատվություն, որի դեպքում կիրառվում է ա-ռարքին ոչ համա-պատասխան գոր-ծողություն
Աշակերտների առողջության պահպանում	Օրենքով սահմանված կարգով սովորողների առողջության պահպանում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, դասղեկներ, բուժքույր	2022-2026թթ.	Բժշկական ծառայության անբավարարություն
Կրթության հանդեպ հետաքրքրության բաակայություն	Ժամանակակից սերունդը ավելի քիչ է ընթերցում և պակաս հետաքրքրություն է ցուցաբերում կրթության հանդեպ: Կրթության գործընթացում կիրառել կրթական նորագույն մեթոդներ, ՏՀՏ գործիքներ, կազմակերպել լավագույն փորձի փոխանակում, համագործակցում այլ դպրոցների մասնագետների և աշակերտների հետ:	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, ուսուցիչներ,աշակեր-տական խորհուրդ, ԾԽ,	2022-2026թթ.	Ժամանակի պահանջներին համահունչ կրթական գործընթաց իրականացնել, դաս-դասարանական մեթոդը վաղուց արդեն քարացած է ու ոչ/՞խ արդյունավետ:
Աշակերտների մոտիվացման, խրախուսման և տույժի կիրառման մեխանիզմների բացակայություն	Աշակերտների խրախուսման և տույժի կիրառման մեխանիզմների ակտի-վացման գործում ընդգրկել դասղեկներին մանկ/կազ, աշակերտական խորհրդին, ինչպես նաև ԾԽ, ՀԽ-ին	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, դաս-ղեկներ,աշակեր-տական խորհուրդ, ԾԽ, ՀԽ	2022-2026թթ.	Օրենքով սահմանված կարգով պատժի և խրախուսման քայլերի ոչ ճիշտ իրականացում
Համայնքի հետ համագործակցություն	Վարչակազմի, մանկավարժների, աշակերտական խորհրդի ակտիվ աշխատանք, համագործակցություն համայնքապետարանի, մշակույթի տան և այլ համայնքային և պետական հիմնարկների հետ	Տնօրեն, փոխտնօրեններ, ԱԽ, ԾԽ	2022-2026 թթ	Թվարկված մասնակիցների համագործակցելու ցանկության բացակայություն

Դպրոցի նախագծային թերությունների վերացում	Ապահովել դպրոցում էլ. էներգիայի այլընտրանքային միջոցների՝ արևային ֆոտովոլտային համակարգերի ներդնում, շենքի էներգետիկ ծախսը նվազեցնելու նպատակով Ոռոգման ջրի և ջրագծի անցկացում	Տնօրեն, տնտեսվար, Կառավարման խորհուրդ, հոգաբարձուների խորհուրդ	2023-2026թթ	Ֆինանսական միջոցների անբավարարություն

Մաս I

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կատարման ժամանակահատված՝ 2023-2024 ուստարի

№	Աշխատանքի նկարագիր	Կատարման ժամ.հատված	Պատասխանատու
Օգոստոս			
1	Մանկավարժական խորհրդի նիստ	Օգոստոսի 28-30	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ
2	Տնօրենի հրամանը վերաքննությունների ժամանակացույցի և հանձնաժողովների վերաբերյալ	Օգոստոսի 28	Տնօրեն
3	Հանրակրթական ուսումնական հաստատության մեթոդմիավորման կողմից նախնական դասաբաշխման կատարում	Օգոստոսի 28-30	Մեթոդմիավորման նախագահներ, ՏՈՒԱԳՏ
4	Վերաքննությունների ¥լրացուցիչ քննությունների¤ անցկացում	Օգոստոսի 28-30	Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, մեթոդմիավորման նախագահներ
5	Դասագրքերի բաշխում	Օգոստոսի 28-30	Գրադարանավարներ, դասղեկներ

6	Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կողմից մեթոդմիավորումների ներկայացրած նախնական դասաբաշխման առաջարկի քննարկում և որոշման կայացում:
	  Օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման առաջարկությունների մշակում:
	  Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան առարկայական ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանի, դասաբաշխման նախագծի քննարկում.
	  Թեմատիկ պլանների քննարկում և ներկայացում տնօրենի հաստատմանը: Սովորողներին դասագրքերով և այլ ուսումնական գրականությամբ ապահովելու հետ առնչվող խնդիրների քննարկում:
	  Բանավոր, գործնական և թեմատիկ աշխատանքների քանակի որոշում:
	  Ուսումնական տարում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում
		Օգոստոսի 28-30	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ

7	
	  Մանկավարժական խորհրդի կազմի հաստատում, քարտուղարի ընտրություն
	  Մեթոդմիավորման նախագահների և դասղեկների կազմի հաստատում
	  Վերաքննությունների արդյունքների ամփոփում
	  Հանրակրթական դպրոցի /2023-2024 ուստարվա համար/ դասարանների կազմավորում
		Օգոստոսի 30-31	Տնօրեն, Մանկավարժական խորհուրդ

8	Առաջին կիսամյակի դասացուցակի նախնական կազմում Դասացուցակի հաստատում	Օգոստոսի 30-31	ՏՈՒԱԳՏ
9	Առաջին դասարանցիների բաշխում համապատասխան դասարաններում /վիճակահանությամբ/	Օգոստոսի 22-30	Տնօրեն, ՏՈՒԳՏ, դասվարներ
Սեպտեմբեր			
10	Գիտելիքի օր /ցերեկույթ/	Սեպտեմբերի 1	ՏՄԿԱԳՏ
11	Հաստատության ծնողական խորհուրդների ձևավորում, ծնողական ժողովների անցկացում Աշակերտական խորհրդի ձևավորման նախապատրաստում Տարիֆիկացիոն ու հաստիքային ցուցակների և ամենամյա ծախսերի նախահաշվի կազմում և ներկայացում հաստատման Հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի նախագծի կազմում Դասացուցակի և դասաբաշխման, առարկայական թեմատիկ պլանների, սովորողների անձնական գործերի լրացում emis.am կայքէջում	Սեպտեմբերի 1-15	Տնօրեն, դասղեկ, ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, ուսուցիչներ, օպերատոր
Հոկտեմբեր			
11	§Ուսուցչի օր¦ ցերեկույթ	Հոկտեմբերի 5	ՏՄԿԱԳՏ
12	Ա տառի շնորհանդես	Հոկտեմբերի 10-15	ՏՈՒԱԳՏ, դասվարներ
13	Մանկավարժական խորհրդի նիստ. Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն, Առարկայական օլիմպիադաների նախապատրաստում Էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումներ Սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաների հաճախումների և առաջադիմության քննարկում ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների դիտարկում	Հոկտեմբերի 30-31	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ
Նոյեմբեր			
14	Տնօրենի հրամանը առարկայական օլիմպիադաների հանձնաժողովի կազմի հաստատման մասին Մեթոդմիավորումների կողմից հարցաշարերի կազմում ¥հասարակագիտական առարկաներ, ՆԶՊ¤ և հաստատում տնօրենի կողմից Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն ¥հատկապես IX և XII դասարանների արդյունքների վերլուծություն¤	Նոյեմբերի 1-30	Տնօրեն, մեթոդմիավորումներ

15	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպում, անցկացում, արդյունքների ամփոփում	Նոյեմբեր - դեկտեմբեր	Տնօրեն, մեթոդմիավորումներ
16	Մեդիագրագիտության շաբաթ Բուլինգի դեմ պայքար	Նոյեմբեր 1-15 Նոյեմբեր 15-30	
Դեկտեմբեր			
17	 Դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու ցանկություն ունեցող սովորողների գրավոր դիմումի ներկայացում ուսումնական հաստատության տնօրենին, Քննություն հանձնողների դիմում հայտերի փոխանցում §Գնահատման և թեստավորման կենտրոն¦ ՊՈԱԿ Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում, ծնողական ժողովների կազմակերպում	Դեկտեմբերի 1-15	Տնօրեն, դասղեկներ
18	Մանկավարժական խորհրդի նիստ. Առաջին կիսամյակում սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների ամփոփում, Առաջիկա տարվա բյուջեի նախագծի քննարկում ՄԿԱ, ԴԱԿ, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվությունների ներկայացում էլ. մատյանների վարման հարցերի քննարկում	Դեկտեմբերի 26-30	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ
Հունվար			
19	 Երկրորդ կիսամյակում ուսումնական գործընթացի նախապատրաստում՝ ուսումնական պլանի, դասացուցակի կազմում, դասաբաշխում, XII դասարանում առարկայական խմբերի ձևավորում Մանկավարժական խորհրդի նիստ՝ XII դասարանի պետական ավարտական քննություններին մասնակցած սովորողների քննական արդյունքների քննարկում Դպրոցական առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի արդյունքների ամփոփում, մարզային փուլի նախապատրաստում, Մեթոդմիավորման հաշվետվությունների և հերթական ատեստավորման ենթական ուսուցիչների կազմի քննարկում և հաստատում ¥զեկուցողներ՝ Մ/Մ նախագահներ, ՏՈՒԱԳՏ¤, Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի նիստ՝ ուսումնական տարվա առաջին կիրսամյակի ֆինանսական և ուսումնադաստարակչական	Հունվարի 3-9	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ

	գործունեության վերաբերյալ հաշվետվությունների քննարկում,
	  ուսումնական հաստատության ամենամյա շախսերի նախահաշվի քննարկում,
	  հաստատության զարգացման շրագրի կատարման ընթացքի քննարկում		

20	Հայկական բանակի օր	Հունվար 25-30	Դասղեկ, ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ
21	ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների քննարկում և լրացում	Հունվար - փետրվար	Տնօրեն, ՏՈՒԱԳՏ, աջակցող թիմ
Փետրվար			

22	
	  Մանկավարժական խորհրդի նիստ
	  Հերթական ատեստավորումն անցած ուսուցիչների դասավանդման արդյունավետության մշտադիտարկում
		Փետրվարի 1-10	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ

23	Մասնագիտական կողմորոշման նպատակով իրականացվող հանդիպումներ մասնագետների հետ: Շրջայցեր բուհերում:	Փետրվար	ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ, դասղեկներ

24	Հ. Թումանյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառումներ.
	  Արտաշատի Ամո Խարազյանի թատրոնը կներկայացնի Բարեկենդանը տարրական դպրոցի սաների համար
	  Ֆիլմի դիտում դպրոցի գրադարանում Հեքիաթի ընթերցում տարրական դպրոցի սաների համար / գրադարանավարներ
		Փետրվարի 13-17	ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ, դասղեկներ

25	Գիրք նվիրելու օր	Փետրվարի 19	Դասղեկներ
26	Ներդպրոցական վերահսկողության իրականացում՝ ամենշաբաթյա ռեժիմով	Փետրվարի 10-28	Տօրեն
27	Մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված միջոցառում/ համադպրոցական/ հայոց լեզու և օտար լեզու Անաղարտ պահենք մեր մայրենին	Փետրվարի 21-22	Մեթոդմիավորումներ
28	Զոհված ազատամարտիկ Գևորգ Ավագյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառում Հետաքրքրաշարժ ֆիզիկա	Փետրվարի 26	ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ
Մարտ			

29	Ուսումնասիրում ենք հոգեբանությունը, հասարակագիտությունը	Մարտի 3	
30	Վարքականոնների ուսուցումը արտակարգ իրավիճակներում	Մարտի 1	Զինղեկ, բուժքույր, ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ
31	Կանանց միջազգային օր .Դպրոցում գործող պարի խմբերիի հաշվետու համերգներ	Մարտի 10	ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ, մեթոդմիավորումներ
32	Բյուջեի կատարման մասին հաշվետվությունները ներկայացնելու և հրապարակելու ժամկետներ կազմելը	Մարտի 11-14	Տնօրեն
33	§Պի¦ տառի ծնունդը. վիկտորինա, մաթեմատիկա	Մարտի 14	Մեթոդմիավորումներ
34	Մեթոդմիավորումների նիստեր	Մարտի 15-16	Տնօրեն, ՏՈՒԱԳՏ, Մեթոդմիավորումներ
35	Մանկավարժական խորհրդի նիստ՝ 2023-2024 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների նախապատրաստման հետ կապված հարցերի քննարկում, Առարկայական օլիմպիադայում սովորողների արդյունքների քննարկում, Ուսման մեջ առաջադիմության արդյունքների ամփոփում, էլ. մատյանների գրանցման, գնահատման և բացակայությունների հարցի քննարկում	Մարտի 17-19	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ
Ապրիլ			
36	12-րդ դասարանում պետական ավարտական քննություններին մասնակիցների ցուցակների փոխանցում ԳԹԿ Կազմակերպել 4-րդ դասարանում §Մայրենի¦, §Մաթեմատիկա¦ առարկաների գիտելիների ստուգում Հերթական ¥պարտադիր¤ ատեստավորման հայտ ներկայացրած ուսուցիչների ցուցակների կազմում Անդրադարձ ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն՝ հայոց լեզու, գրականություն, մաթեմատիկա ¥հանրահաշիվ, երկրաչափություն¤ Հաստատության մանկավարժական խորհրդի նիստ ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական առաջադիմության քննարկում Գրքի քննարկում	Ապրիլի 1-25	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ, ՏՈՒԱԳՏ, մեթոդմիավորումներ, աջակցող թիմ, ուսուցչի օգնականներ

37	Ցերեկույթ՝
	  Ապրիլի 7՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին
	  Սուրբ Զատիկ: Ազգային ավանդական տոներ:
		Ապրիլի
		7-10
			ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ

38	Երկրի պահպանության օր (միջոցառում բնագիտական) Շրջակա միջավայրի պահպանություն/ համադպրոցական շաբաթօրյակներ, ծառատունկ, արշավ դեպի Խոր Վիրապ:	Ապրիլի 22	Մեթոդմիավորում
39	Եղեռնի զոհերի հիշատակի օր (քայլարշավ դեպի եղեռնի զոհերիի հիշատակի հուշարձան/համադպրոցական)	Ապրիլի 24	Տնօրեն, ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ, ուսուցիչների,
Մայիս			

40	
	  Ընտանիքի միջազգային օր
	  Համբարձման տոն
	  Պոեզիա (ռուսերեն)
	  Այբբենարանի հանդես (1-ին դասարաններ)
	  Ավարտական միջոցառումներ
	  Ասմունքի մրցույթ հայոց լեզվի (համադպրոցական)
	  Վերջին զանգ
		Մայիս	ԴԱԿ, ՏՄԿԱԳՏ, ուսուցիչներ, մեթոդմիավորումներ, դասղեկներ

41	
	  Պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննություններին նախապատրաստական գործընթացի քննարկում
	  Անդրադարձ առարկայական օլիմպիադաներին սովորողների մասնակցությանը
		Մայիսի
		2-4
			Տնօրեն, ՏՈՒԱԳՏ, մեթոդմիավորման նախագաներ

42	
	  IV դասարանում §Մայրենի¦ և §Մաթեմատիկա¦, IX դասարանում §Գրականություն¦, §Հայոց պատմություն¦, §Օտար լեզու¦, գիտելիքների ստուգում, X-XI դասարանների փոխադրական քննական տոմսերի կազմում,
	  Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած II-XI դասարանների սովորողների ցուցակների նախնական կազմում, քննությունների ցանկի և ժամանակացույցի հաստատում, ինչպես նաև XII դասարանի ¥19-ը տարին լրացած¤ սովորողների հաստատությունից դուրս մնալու հարցի քննարկում մանկավարժական խորհրդում, համապատասխան տեղեկատվության ներկայացում,
	  Անդրադարձ
	  ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանը
	  էլ. մատյաններում կատարվող գրանցումներին
	  Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարմանը
		Մայիս
		14-20
			Տնօրեն, ՏՈՒԱԳՏ, Մեթոդմիավորումներ,

43	II-XII դասարանների սովորողների հաջորդ դասարան փոխադրելու, քննություններին թույլատրելու, XII դասարանի սովորողներին քննություններին թույլատրելու հարցի քննարկում մանկավարժական խորհրդի նիստում	Մայիսի 30-31	Տնօրեն, ՏՈՒԱԳՏ, մեթոդմիավորումների նախագահներ
Հունիս			
44	Ավարտական, պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննությունների անցկացում, ավագ դպրոցում փոխադրական քննությունների անցկացում Նախնական դասաբաշխում	Հունիս	Տնօրեն, ՏՈՒԱԳԸ, մեթոդմիավորման նախագահներ
45	Ավանդապատում՝ ուստարվա ամփոփիչ փառատոն-ստուգատես (համադպրոցական). Շնորհակալագրերի հանձնում ուստարվա ընթացում հաջողություններ ունեցող աշակերտներին, ուսուցիչներին (համադպրոցական) Երեխաների պաշտպանության օր (համադպրոցական)	Հունիսի 1	Կերպարվեստի ուսուցչուհի, ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, դասղեկներ
Հուլիս-Օգոստոս			
46	Վերաքննությունների անցկացում	Հուլիսի 2-8 Օգոստոսի 20-30	Տնօրեն, նշանակված հանձնաժողվ
47	Արմաթ ինժեներական լաբորատորիա/ աշխատանքների պլանավորում, համակարգում և իրագործում աշխատանոց ներդնելու նպատակով:	ուստարվա ընթացքում	ՏՄԿԱԳՏ, կա,մավորների խումբ, Տնօրեն

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը, որի բաղկացուցիչ մասն է կազմում աշխատանքը ծնողների հետ: Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

- օգնել սովորողին (հատկապես դեռահասին) առանց սթրեսների հարմարվել իր «աշխարհում» անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին,
- նպատակաուղղել երեխային՝ ազգային և համամարդկային արժեքների համակարգում ձևավորվելու որպես ապագա քաղաքացի,
- զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,
- աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը, պահպանողը և փոխանցողը,
- յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ,
- խթանել սովորողների արտադասարանական և արտադպրոցական ակտիվությունը,
- ապահովել մասնագիտական կողմնորոշումը:

Վերոնշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր: Դպրոցի դաստիարակչական միջավայրը ներառում է՝

- դպրոցի անձնակազմը (կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ և այլոք),
- ակտիվ ծնողական համայնքը,
- դասարանական անձնակազմը:

Դպրոցի դաստիարակչական միջավայրը հիմնված է աշակերտական ինքնավարության ձևավորման և դպրոցի ավանդույթների վրա:

ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

- Պարտադիր կրթության իրականացում
- Աշխատանք օժտված երեխաների հետ
- Երեխայի աշխարհայացքի ձևավորում
- Տեղեկատվական աշխատանք
- Ուսումնանյութական բազայի հարստացում
- Մեթոդմիավորման անդամների մասնագիտական և մեթոդական հմտությունների ապահովում

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների հենքային բովանդակությունն իրականացվում է երեխաների զարգացման պետական չափորոշիչներին համապատասխան ներառելով զարգացման հետևյալ ոլորտները. ֆիզիկական շարժողական խոսքի զարգացում, իմացական ճանաչողական հուզական անձնային և սոցիալական զարգացում, ինքնասպասարկում և անվտանգություն, վերաբերմունք ուսման նկատմամբ:
Արտաքին և ներքին ֆիզիկական միջավայրը որը իր մեջ ընդգրկում է ուսումնական հաստատության ողջ շրջակայքը նպաստում է երեխայի բնական աճին և զարգացմանը,ներգործում երեխաների հետաքրքրությունների, վարքի և մշակույթի վրա:
Լավ նախագծված միջավայրը , նպաստավոր է երեխաների խմբային խաղերի, շփման, անկախ տեղաշարժման և խնդիրների լուծման համար:
1. ներքին և արտաքին ֆիզիկական միջավայրը պետք է լինի ապահով, մաքուր, գրավիչ և ընդարձակ, ունենա տարածք բացօթյա խաղահրապարակում: Աշխատակազմը պետք է մինչև երեխաների գալը միջավայրը նախապես պատրաստելու բավարար ժամանակ ունենա:

2. Աշխատանքային կենտրոնները պետք է հստակորեն սահմանված և տարաբաժանված լինեն տարածական առումով: Տարածքը պետք է դասավորված լինի այնպես, որ երեխաները կարողանան աշխատել անհատապես, միասին, փոքր կամ մեծ խմբերով: Տարածքի դասավորությունը պետք է թույլ տա երեխաներին ազատ տեղաշարժվել մի կենտրոնից մյուսը առանց մյուսների ուշադրությունը շեղելու:

3. Տարածքի դասավորությունը պետք է թույլ տա, որ երեխաները կարողանան զբաղվել իրենց տարիքին համապատասխան բազմազան և տարբեր տևողություն պահանջող աշխատանքներով:

4. Բավարար քանակով, բազմատեսակ ու դիմացկուն նյութերը և սարքավորումները պետք է լինեն երեխաների տարիքին համապատասխան և դրված լինեն նրանց համար մատչելի տեղում, որտեղից երեխան կարող է ազատ և ինքնուրույն օգտվել:

5. Երեխաների համար պետք է ապահովել առանձին տեղ իրենց հագուստը կախելու և անձնական իրերը պահելու համար:

6. Երեխաների համար պետք է ապահովել տեղ, որտեղ կարելի է առանձնանալ:

7. Արտաքին միջավայրը պետք է ներառի տարբեր տիպի մակերեսներ, ինչպիսիք են հողը, ավազը, խոտը, հարթ ու խորդուբորդ հատվածները, կոշտ տարածքը և այլն: Արտաքին միջավայրը կարող է լինել ստվերոտ, բացօթյա, փորելու, որևէ բան քշելու, մագլցելու, առանձին խաղալու հնարավորություն ապահովող:

Նյութական միջավայրը ներառում է նաև հարմար կահավորված սանհանգույց, խաղասենյակ, ննջասենյակ, խոհանոց, այգում կամ բակում բացօթյա խմբասենյակ ամառային պարտեզ:

Ֆիզիկական միջավայրը բայանվում է աշխատանքային կենտրոնների, որոնք թույլ են տալիս երեխաներին ինքնուրույն կողմնորոշվել ուսումնախաղային նյութերի ու սարքավորումների ընտրության հարցում և զբաղվել իրենց համար կարևոր և իմաստալից ուսումնական գործունեությամբ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակներ.
 Սովորողների համար միջավայրի ապահովում, ուր հնարավորություն կունենան ինքնաբացահայտվելու, զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները, ինչը կնպաստի նրանց՝ որպես անհատ քաղաքացի կայացմանը և հետագայում հասարակության մեջ ինտեգրմանը,

 Սովորողների նախաձեռնողական և աշակերտական ինքնավարության մարմինների կարողությունների զարգացում,

 Աշակետների մոտ քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, սեր և հարգանք հայրենիքի, դպրոցի, ուսուցչի, ծնողի հանդեպ,

 Աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակության իրագործում: Արժեքային համակարգի ձևավորում:

 Աշակետների ստեղծագործական, հասարակական գործունեության կազմակերպում:

 Հայրենի երկրի պատմության և մշակույթի ուսումնասիրում:

 Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում:

 Էկոլոգիական դաստիարակության կարևորում:

 Հոգևոր դաստիարակության բաղադրիչի կարևորում դաստիարակչական աշխատանքներում:

 Դասղեկական աշխատանքների բարելավում:

 Կրթական տարբեր կարիք ունեցող երեխաների արդյունավետ և զարգացնող ներգրավվածության ապահովում:

Խնդիրներ.
 Աշակետների մոտ քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, սեր և հարգանք հայրենիքի, դպրոցի, ուսուցչի, ծնողի հանդեպ:

 Աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակության իրագործում:

 Արժեքային համակարգի ձևավորում:

 Աշակետների ստեղծագործական, հասարակական գործունեության կազմակերպում:

 Հայրենի երկրի պատմության և մշակույթի ուսումնասիրում:

 Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում:

 էկոլոգիական դաստիարակության կարևորում:
 Հոգևոր դաստիարակության բաղադրիչի կարևորում դաստիարակչական աշխատանքներում:

 Դասղեկական աշխատանքների բարելավում:

 Կրթական տարբեր կարիք ունեցող երեխաների արդյունավետ և զարգացնող ներգրավվածության ապահովում:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջաններն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայանում մեր օրերում:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը բազմապլանային, համակարգված, կոնկրետ նպատակաուղղվածություն ունեցող և կոորդինացված գործընթացն է, որի հիմնական նպատակն է աշակերտների մոտ ձևավորել հայրենասիրության գիտակցում, հավատարմության զգացում հայրենիքի հանդեպ, քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամություն, հայրենիքի պաշտպանությանն ուղղված այլ սահմանադրական պարտականությունների կատարման պատրաստակամություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է աշակերտների մոտ զարգացնել հայրենասիրությունը որպես կարևոր հոգևոր-բարոյական և սոցիալական արժեք, անձի մոտ ձևավորել պրոֆեսիոնալ որակ, հմտություններ և համապատասխան պատրաստվածություն և պատրաստակամություն վերոնշյալները կիրառելու հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, հատկապես ռազմական և դրա հետ կապված պետական ծառայության այլ ոլորտներում: Ռազմահայրենասիրական դաստիարակության առջև դրված նպատակների իրագործման համար անհրաժեշտ է հասնել ներքոնշյալ խնդիրների լուծմանը՝

 Նախազորակոչային տարիքի անձանց ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետ իրականացման համար համապատասխան պայմանների ապահովում,

 Աշակերտների զգացմունքային ոլորտում և գիտակցության մեջ հայրենասիրական արժեքների, հայացքների և համոզմունքների հաստատում, Հայաստանի Հանրապետության պատմության մշակույթի հանդեպ հարգանքի ձևավորում, պետական գիտակցության բարձրացում՝ հատկապես ռազմական ոլորտի գծով,

 ռազմահայրենասիրական դաստիարակության նոր, առավել արդյունավետ համակարգի մշակում, որը հանարավորություն կտա ապահովելու աշակերտների մոտ հայրենիքի հանդեպ հավատարմության զարգացման օպտիմալ պայմաններ, հասարակությանը և պետությանը ծառայելու պատրաստակամություն,
 ռազմահայրենասիրական դաստիարակության ամբողջական համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովող մեխանիզմի ստեղծում:

Ռազմահայրենասիրական բովանդակության մեջ կարելի առանձնացնել միմյանց հետ սերտորեն փոխկապակցված երկու բաղադրիչ: Դրանցից առաջինը բնորոշվում է առավել լայն սոցիալ-մանկավարժական ուղղվածությամբ: Այն հիմնվում է այնպիսի տարրերի վրա ինչպիսիք են՝ դրական աշխարհընկալում և հայացքներ, կարևոր հոգևոր և բարոյական որակներ՝ սեր հայրենիքի հանդեպ, հարգանք օրենքի նկատմամբ, հայրենիքի հանդեպ պարտքը կատարելու պատրաստակամություն:

Սոցիալ-մանկավարժական բաղադրիչը գերակշռող է և կազմում է ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքը: Հիմնվելով անձի որպես անհատի ձևավորման վրա և նրա մեջ զարգացնելով ՀՀ քաղաքացուն բնորոշ հայացքներ, դիրք, հետաքրքրություններ, գործունեության իրականացման մոտիվներ՝ կարելի է նախազորակոչային տարիքի անձին ամբողջովին նախապատրաստել ծառայությանը՝ հայրենիքի հանդեպ պարտքի կատարմանը:

Ռազմահայրենասիրական դաստիարակության հատուկ բաղադրիչը բնորոշվում է առավել կոնկրետությամբ և գործնական ուղղվածությամբ: Սույնի գործնական իրականացումը նպատակաուղղված է ապահովելու՝

- Յուրաքանչյուր անձի կողմից հայրենիքի հանդեպ սեփական պարտավորությունների և դիրքի գիտակցում,
- անհրաժեշտության դեպքում հայրենիքի պաշտպանության գործին պատրաստակամ լծվելու վստահություն,
- անձի հիմնական հատկանիշների, որակների, հմտությունների, սովորույթների ձևավորում, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական պարտքը բարեհաջող կատարելու համար:

Հատուկ բաղադրիչի հիմքը հանդիսանում է սերը հայրենիքի հանդեպ, քաղաքացիական և ռազմական ծառայության հանդեպ հավատարմությունը, ռազմական պատիվը, արիությունը, հաստատակամությունը, նվիրվածությունը, տղամարդկությունը: Ժամանակակից պայմաններում ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակներում աշակերտների, երիտասարդության համար առաջնահերթ են համարվում հոգևոր-բարոյական արժեքները՝ համաժողովրդականությունը ազգային մասշտաբով:

Վերոնշյալ հոգևոր և բարոյական արժեքների ձևավորման գործում առանձնակի կարևորությամբ առանձնանում է դպրոցը: Այս արժեքները աշակերտների մեջ արմատավորվում են հայ գրականության, հայ եկեղեցու պատմության, պատմության, ռազմագիտության դասընթացների անցկացման միջոցով, որոնք պարտադիր կերպով նախատեսված են դպրոցական ծրագրում:

Հայրենիքի պաշտպանության քաղաքացիական և հասարակական ծառայության պատրաստակամության և բարեհաջող կատարման համար անհրաժեշտ են ներքոնշյալ գործողությունները՝

- Հոգևոր-բարոյական՝ անձի կողմից բարձրագույն արժեքների, իդեալների, սոցիալական կարևոր իրադարձությունների և իրական կյանքի երևույթների գիտակցում, վերոնշյալների հանդեպ կառավարելու ունակություն, դիրքի, պրակտիկ գործողությունների և վարքագծի ձևավորում: Այն ներառում է բարձր մշակույթի և կրթվածության զարգացում, գաղափարների գիտակցում, բարոյական արժեքների, մասնագիտական և էթիկական վարքագծի չափանիշների, ռազմական պատվի ձևավորում,
- Պատմական՝ մեր արմատների, հայրենիքի միօրինակության, նրա ճակատագրի հանդեպ պատասխանատվության գիտակցում:
- Հայրենասիրական՝ կարևոր հոգևոր բարոյական և մշակութային-պատմական արժեքների դաստիարակում, որոնք արտահայտում են մեր հասարակության ընդհանուր դեմքը, ձևավորում են ազգային ինքնագիտակցություն, ապրելակերպ, աշխարհընկալում: Այն ներառում է անմնացորդ սեր հայրենիքի հանդեպ, նվիրվածություն, տվյալ ազգին պատկանելու հպարտություն, ազգին և հայրենիքին ծառայելու պատրաստակամություն:
- Հոգեբանական՝ նախազորակոչային տարիքի անձանց մոտ հոգեբանական բարձր կայունություն, պատրաստվածություն՝ կատարելու բարդ և պատասխանատու հանձնարարություններ ցանկացած պարագայում, ունակություն հաղթահարել դժվարությունները և ինքնազրկումները, անհրաժեշտ հոգեբանական կողմերի ամրապնդումը և ձևավորումը, որոնք անհրաժեշտ են ոչ միայն ռազմական ծառայության ոլորտում,

 Դաստիարակություն ռազմական ավանդույթների հիմքով: Ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման հարցում կարևոր նշանակություն ունի նախազորակոչային տարիքի անձանց մասնակցությունը զորակոչված ազգականների երդման արարողություններին:

Վերոնշյալ կետերը բոլորը սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ, պրակտիկ գործունեության ընթացքում կիրառվում են միաժամանակ: Ռազմահայրենասիրական դաստիարակության հարցում կարևոր նշանակություն ունեն դեռահասի հոգեբանական առանձնահատկությունները: Դեռահասի օրգանիզմում կատարվող կազմա-բնախոսական էական փոփոխությունները երկար ժամանակի ընթացքում հիմք են հանդիսացել այնպիսի տեսությունների առաջ քաշման համար, ըստ որոնց դեռահասի առանձնահատկություններն ու զարգացման ճգնաժամային փուլի երևույթները կենսաբանական պայմանավորվածություն ունեն:

Թե՛ ռազմահայրենասիրական, թե՛ առհասարակ դաստիարակության հարցում

դեռահասության տարիքը կարևորվում է այն հանգամանքով, որ այս տարիքում է ձևավորվում ես-ը: Այս շրջանում դեռահասի մոտ ուժեղանում է ինքնադիտման նկատմամբ հակումը, եսակենտրոնությունը, ընկնում է ես-ի կայունությունը, ինքնահարգանքը, էապես փոխվում է ինքնագնահատականը: Դեռահասները շատ ավելի հաճախ, քան երեխաները, մտածում են, որ ծնողները, ուսուցիչները և հասակակիցները իր մասին վատ կարծիք ունեն: Նրանք շատ հաճախ դեպրեսիվ վիճակների մեջ են ընկնում: Սակայն 15 տարեկանից հետո պատկերը փոխվում է դեպի լավը:
Դեռահասության փուլի կարևորությունն ու առանձնահատուկ տեղը պայմանավորված է նրանով, որ չափահասի և դեռահասի միջև հաստատված և մանկության տարիքին հատուկ հարաբերությունները հենց այստեղ են փոխարինվում այնպիսի փոխհարաբերություններով, որոնք հատուկ են չափահաս մարդկանց շփման պրոցեսներին: Այդ անցումը իրենից ներկայացնում է դեռահասի և չափահասի սոցիալական փոխներգործությունների նոր եղանակների կազմավորման պրոցես: Դեռահասի վարքը, նրա ինքնագնահատումն ու իր նկատմամբ մեծերի կողմից ցույց տրվող վերաբերմունքի գնահատումը միջնորդավորող նոր կանոնները դառնում են ձևավորվող բարոյական աշխարհայացքի հիմքը:
Ռազմահայրենասիրական դաստիարակությանը մեր երկրում տարեցտարի ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձվում: Կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների թվում առաջնային տեղ է զբաղեցնում դպրոցներում նախնական զինվորական պատրաստություն առարկայի դասավանդումը: Շատ բան է արվել մինչ այժմ, սակայն այսօր էլ խնդիրները ոլորտում քիչ չեն: Ամեն տարի շահագրգիռ գերատեսչությունների և կառույցների ղեկավարները ընդլայնված համատեղ նիստերի ընթացքում քննարկում են դրանց վերացման, աշխատանքների բարելավման հետ կապված հարցերը: Բնականաբար, աշխատանքները չեն սահմանափակվում տարեկան մեկ անգամ արդյունքների ամփոփմամբ: Պարբերաբար ոլորտի պատասխանատուները հանդիպումներ են ունենում տեղերում, պարզում ուսումնական գործընթացի արդյունավետությունը, տալիս նոր հանձնարարականներ:
Արդեն մի քանի տարի է, ինչ պաշտպանության և կրթության ու գիտության նախարարների համատեղ հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի նպատակն է օգնել դպրոցներին ռազմահայրենասիրական ուսուցման բազա ստեղծելու և անհրաժեշտ գրականությամբ ապահովելու գործում: Խմբում ներգրավված են նաև այլ շահագրգիռ կառույցների, մասնավորապես՝ ոստիկանության ներկայացուցիչներ: Որպես աշխատանքի արդյունավետության ցուցանիշ՝ առաջին հերթին նշվեց կրթօջախները ուսումնական զենքով ապահովելու գործընթացը:

Ռազմահայրենասիրական դաստիարակության բացակայությունը լուրջ սպառնալիք է մեր հայրենիքի համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր ստեղծել հայրենասիրական դաստիարակության հայեցակարգ: Խնդիր, որը արդիական է ոչ միայն կրթության և պաշտպանության համակարգի համար, այլև իր արդիականությունն է պահպանում հասարակական զարգացումների ընթացքում:

Կրթությունը միայն գիտելիքի փոխանցման և հմտությունների և կարողությունների ձևավորման գործ չէ, կրթությունը նաև արժեքների վերարտադրման և փոխանցման գործընթաց է. Հետևաբար՝ չի կարելի կրթության մեջ թերագնահատել դաստիարակչական բաղադրիչը:
Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը երկրի անվտանգության ապահովման տարրերից մեկն է: Յուրաքանչյուր պետության ռազմական ներուժը՝ ուղղված սեփական անվտանգության ապահովմանը, ներառում է տնտեսությունը՝ իր բոլոր ոլորտներով, բանակը, ինչպես նաև աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը:
Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրն կրթության ոլորտի համար ունի սկզբունքային նշանակություն: Կրթության համակարգը տալիս է ոչ միայն գիտելիքներ, այլև պատրաստում է հայրենիքի ապագա պաշտպաններին:

Դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ կատարված աշխատանքները, եղած խնդիրները, դրանց լուծման և աշխատանքների բարելավման հետ կապված հարցերը քննարկվում են տարբեր խորհրդակցություններում, որին մասնակցում էին դպրոցների տնօրեններ, զինղեկներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ:
Խոսելով դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին, նշենք այն դրական առաջընթացը, որ առկա է ոլորտում շնորհիվ կրթության և գիտության նախարարության հետ ակտիվ համագործակցության:
Պետք է նախազորակոչային տարիքի անձանց մեջ ռազմահայրենասիրություն սերմանել՝ սկսած դեռևս վաղ տարիքից, և ապա այն ամրապնդել դպրոցական հասակում: Ռազմահայրենասիրական ճիշտ դաստիարակությունը կնպաստի, որ պատանիները ավելի շատ դիմեն ռազմաուսումնական հաստատություններ: Բանակում պատշաճ կարգապահություն ապահովելու համար նախ պետք է մտածենք դպրոցում ապագա զորակոչիկների դաստիարակության մասին:
Տղաների մոտ զենքին տիրապետելու արվեստը, զինվորական պատրաստվածությունն ու ռազմահայրենասիրական դաստիրակությունը բարձր մակարդակին հասցնել՝ մինչ նրանց բանակ զորակոչվելը: Այս ամենը հնարավորինս ամուր հիմքերի վրա դնելու անհրաժեշտություն կա դպրոցներում:

Զինղեկներից պահանջվում են ուսումնական ծրագրերում ռազմահայրենասիրության թեմաների ներառումը՝ ռազմահայրենասիրական միջոցառումներով: Կրթական ծրագրին համապատասխան՝ Ռազմագիտություն առարկան 8-12-րդ դասարաններում ուսումնասիրում են շաբաթական մեկ դասաժամ ծանրաբեռնվածությամբ:

Մաս III

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Պլանավորում

 2023-2024 ուստարում սովորողների ուսումնառությունը կազմակերպել հանրակրթական պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների և վերջնարդյունքների ապահովման ուղղությամբ,

 Կազմել առարկայական թեմատիկ պլանները՝ հիմք ընդունելով հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները,

 Դասերի պլանները կազմելիս հաշվի առնել չափորոշչային պահանջները, սահմանել դասերի նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները,

 Պլանավորել ՏՀՏ դասերը՝ մեդիագործիքների կիրառմամբ առավել արդյունավետ կազմակերպելով դասերը,

 Ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ պլանավորելով գիտելիքների ստուգման բանավոր բաղադրիչից բացի նաև գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքները,

 Պլանավորել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի ձևերը՝ համագործակցելով դպրոցի աջակցող թիմի հետ, կազմելով ԱՈՒՊ-ներ և սահմանելով կոնկրետ գործողություններ, քննարկել արդյունքները մասնագիտական աջակցությունների ծառայության աշխատակիցների հետ,

 Հեռավար ուսուցումը պլանավորել ուսումնական գործընթացի կազմակերպման առկա այլընտրանքների ու հնարավորությունների համատեղմամբ,

 Ուշադրության կենտրոնում պահել նախագծային աշխատանքների պլանավորման ողջ ընթացքը՝ թեմայի ընտրությունից սկսած մինչև ներկայացում:

2. Կազմակերպում

 Սովորողների միավորային գնահատումը կատարել «2023-2024 ուսումնական տարում հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի» կիրառմամբ,

 Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար ուսուցիչների կողմից կիրառվեն ուսուցման գործնական, ինտերակտիվ, համագործակցային մեթոդներ,

 Ամիսը առնվազն մեկ անգամ իրագործվեն բնագիտության, կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի ՏՀՏ դասեր՝ տեսադասերով և գործնական աշխատանքներով,
 էլեկտրոնային դասամատյանների տնային առաջադրանքների առկա գրանցումները մինչև ուստարվա վերջ պետք է համընկնեն տարեկան թեմատիկ պլանավորմանը,

 Ուսուցիչների կողմից բացահայտվեն, դիտարկվեն, հետազոտվեն և գնահատվեն երեխաների առկա և հեռավար ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները,

 Դասավանդման ընթացքում ուսուցիչները նպաստեն երեխաների մոտ պատշաճ վարքագիծի և վարվելակերպի ձևավորմանը, հիմնականում կիրառվեն համատեղ զրույցներ, փոխհամաձայնություն, ընկերային միջավայր,

 Տարեկան թեմաները դասավանդվեն լիարժեքորեն բոլոր դասարաններում առաջին կիսամյակում՝ 15 շաբաթ, երկրորդ կիսամյակում՝ 19 շաբաթ՝ ըստ օրինակելի ուսումնական պլանի,

 Պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները,

 Կատարել դպրոցի տնօրինության և լիազոր մարմնի հանձնարարականները, հրահանգները,

 Ուշադրության կենտրոնում պահել նախագծերի իրագործման ողջ ընթացքը՝ թեմայի ընտրությունից սկսած մինչև ներկայացում:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Նախագծին ներկայացվող պահանջներ

Ուսումնական նախագիծը պիտի ունենա.
— թեմա և ուսումնասիրման ենթակա թեմայի հետ կապված հարցադրումներ,

— աշխատաքի փուլեր (նախնական պլանավորում, գործողությունների ծրագիր, ժամկետներ, միջանկյալ հաշվետվություններ),

— աշխատանքի վերջնաժամկետ,

— ակնկալվող արդյունք (հրապարակախոսություն, տեսաֆիլմ, ձեռնարկ, փաթեթ, շտեմարան, հոդված, ներկայացում և այլն)

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՆԱԽԱԳԾԵՐ

1. Ինչպե՞ս սկսել նախագիծը: Նախագիծը սկսել սովորողների մոտիվացիայից՝ Սովորողներին հնարավորություն տալ զգալու՝ ինչ ասել է իսկական թիմ, գրի առեք և քննարկեք յուրաքանչյուր մասնակցի արտահայտած գաղափար կամ միտք,

2. Սովորողների հետ միասին աշխատանքային ուղեցույց ստեղծել, աշխատել համատեղ ստեղծված աշխատանքային կանոնների համաձայն: Հաշվի առնել սովորողների կարծիքը: Կատարել աշխատանքի հնարավորինս հստակ բաժանում,

3. Նախագծի ղեկավարը պետք է կատարի նախագծի նախնական պլանավորում, ապահովի առաջնային գիտելիք պարունակող տեղեկատվությունը,տրամադրի համացանցային հղումներ, գրքերի անուններ և այլ անհրաժեշտ նախնական տեղեկություն: Առարկայական ուսուցիչը պետք է ապահովի մասնագիտական խորհրդատավություն սովորողին, պետք է օգնի սովորողին որոնել տեղեկատվական գրականություն, այլ նյութեր, մեդիանյութեր, օգնի կոնկրետ հարցեր լուծելիս առաջացած դժվարությունները հաղթահարել, փոխանցել համապատասխան հմտություններ:
4. Նախագծային աշխատանքի առաջին փուլ: Ստեղծվում են աշխատանքային խմբեր: Նախագիծը իրականացնում է խմբով, անդամների միջև աշխատանքի բաժանում է լինում, խումբը ունենում է ղեկավար, որը նաև համակարգում է մյուսների աշխատանքը,

5. Աշխատանքի երկրորդ փուլ: Նախագծի իրականացման ընթացքում կատարվում են հետազոտական աշխատանքներ
Նախագծի արդյունքի ներկայացում (արդյունքը պետք է ունենա հասարակական արժեք).
- աշխատանքների գնահատում, ստացված արդյունքի համապատասխանությունը սկզբնական պահանջներին

6. Աշխատանքի երրորդ փուլ: Նախագիծը ենթադրում է վերանայում ծրագրի կիրառման արդյունքում նկատված թերությունների, ստացված դիտողությունների, առաջարկությունների քննարկում և համապատասխան փոփոխությունների կատարում:

7. Կատարված աշխատանքի ներկայացում սովորողների կողմից: Սովորողը պիտի կարողանա ներկայանալ և ներկայացնել նախագիծը:

8. Նախագծային աշխատանքի գնահատում: Կազմել միավորային սանդղակ հետևյալ չափանիշներով՝

— Անհատական ներգրավվածություն

— Հետազոտություն

— Վերլուծություն

— Գնահատում

— Հաղորդակցություն

Իրական նախագծային աշխատանքի արդյունքում սովորողները ձեռքբերում պիտի ունենան՝ միասին ստեղծելով շոշափելի արդյունք: Դասավանդողը սովորողների հետ միասին, նախագծերի

արդյունքում, ուսումնական տարվա ընթացքում ստեղծում է ուսումնական նյութեր, առաջադրանքների և հարցաշարերի շտեմարան, ուղեցույցներ, ուսումնական մեդիափաթեթներ, ուսուցման այլ նյութեր, տեսանյութեր, որոնք պետք է հասանելի լինեն բոլորին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձն է, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Անհատական ուսուցման պլան՝ ԱՈՒՊ. ԱՈՒՊ-ը հաստատված ձևաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա: ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթության հիմքն է: ԱՈՒՊ-ը հաստատված ձևաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա: ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթության հիմքն է:

Ո՞ւմ համար է մշակվում ԱՈՒՊ-ը. ԱՈՒՊ-ը մշակվում է այն սովորողների համար, ովքեր ունեն դժվարություններ կրթության մեջ և սահմանված կարգով գնահատվել ու ճանաչվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Նրանք չեն կարողանում յուրացնել հանրակրթական ուսումնական ծրագրերը առանց համապատասխան ծրագրային կամ միջավայրային հարմարեցումների: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի պատճառները հետևյալ խանգարումներն են.

— Ձայնի և խոսքի,

— Տեսողության,

— Լսողության,

— Ինտելեկտուալ (մտավոր),

— Շարժողական:

Ինչպե՞ս են մատուցվում ԱՈՒՊ-ում նախանշված ծառայությունները. ԱՈՒՊ-ում նախանշված կրթական ծառայությունները մատուցվում են դասարաններում՝ դասերի ժամանակ ուսուցիչների կողմից, իսկ մասնագիտական ծառայությունները՝ ռեսուրս սենյակներում մանկավարժահոգեբանական աջակցության թիմի կողմից: Այլ դեպքերում ԱՈՒՊ-ով նախատեսված մասնագիտական ծառայությունները ծնողի համաձայնությամբ կարող են մատուցվել նաև տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում՝ կախված սովորողների կարիքներից կամ դպրոցի ռեսուրսներից: Որոշ սովորողներ կարող են ունենալ ԱՈՒՊ միայն մեկ առարկայի համար, իսկ մյուսները, բացի մասնագիտական ծառայություններից, կարող են ունենալ ԱՈՒՊ ակադեմիական բոլոր առարկաների համար: Կարող են լինել նաև սովորողներ, որոնց համար ԱՈՒՊ-ում որևէ առարկայական ծրագիր չի հարմարեցվի (ֆիզիկական դժվարություններ կամ միջավայրային հարմարեցումների կարիք ունեցող սովորողներ), քանի որ սովորողը հաջողությամբ յուրացնում է իր դասարանի բոլոր առարկայական ծրագրերը՝ առանց որևէ ծրագրային, բովանդակային հարմարեցումների, սակայն այս սովորողների ԱՈՒՊ-ներում կպլանավորվեն և կնախանշվեն անհրաժեշտ միջավայրային հարմարեցումները:

ԱՈՒՊ-ի կազմման մեջ ներգրավված անձիք. Առաջինը՝ հասկանալ, թե ովքեր են ընդգրկված սովորողի ԱՈՒՊ-ի մշակման թիմում, և որն է նրանց դերը: Բոլոր այն մարդիկ, ովքեր իրենց գործունեության ընթացքում առընչվում են երեխայի հետ պետք է մասնակցեն երեխայի ԱՈՒՊ գրելուն: ԱՈՒՊ-ի թիմի անդամներն են.

— դասավանդող ուսուցիչները,

— մանկավարժահոգեբանական աջակցության թիմը (հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ, լոգոպեդ և այլն),

— ուսուցչի օգնականը,

— սովորողը (հնարավորության դեպքում),

— սովորողի ծնողը,

— դպրոցի տնօրենը,

— դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը:

Յուրաքանչյուր մասնակցի տրամադրած տեղեկատվությունը ավելացնում է թիմի ըմբռնումը սովորողի ուժեղ կողմերի, դժվարությունների, հետաքրքրությունների և հնարավորությունների վերաբերյալ, քննարկվում է նաև, թե ինչ հարմարեցումներ և ծառայություններ են անհրաժեշտ լինելու նրան:

ԱՈւՊ-ի իրականացումը. ԱՈւՊ-ի իրականացման ընթացքում երեխայի դասավանդող ուսուցիչը կարևոր դերակատարում ունի դպրոցում գիտելիքների յուրացման, հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում:

- Համագործակցեք մանկավարժահոգեբանական աջակցող մասնագետների հետ: Ուսուցիչներին անհրաժեշտ են հմտություններ՝ ԱՈւՊ-ում նպատակներ սահմանելու և իրենց դասերի ժամանակ դրանք արդյունավետ իրականացնելու հարցում: Մասնագետները սերտորեն համագործակցում են ուսուցիչների հետ մշակված ԱՈւՊ-ը դասարանում գործողությունների վերածելու հարցում:
- Գնահատեք ԱՈւՊ-ը: Ուսումնական տարվա ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի գնահատում հաճախ է իրականացվում (ընթացիկ, կիսամակային, տարեկան) համոզվելու համար, որ սովորողը հասնում է ԱՈւՊ-ում դրված նպատակներին: ԱՈւՊ-ում սահմանված նպատակներն ու նպատակադրումները ցանկացած պահի կարող են փոփոխվել՝ ըստ անհրաժեշտության:

Ներդպրոցական վերահսկողության համակարգ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդպրոցական վերահսկողության համակարգի նպատակները.

Ներդպրոցական վերահսկողությունը ուսուցչի աշխատանքի արդյունքների դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծությունն է: Ներդպրոցական վերահսկողությունը կենսական պահանջ է և՛ դպրոցի ղեկավարության, և՛ յուրաքանչյուր ուսուցչի համար: Չէ՞ որ ոչ մի բնագավառում էլ աշխատողը չի կարող կատարելագործել իր աշխատանքը, եթե չգիտի նրա իրական վիճակը, առկա թերությունները և իր աշխատանքի հանդեպ պահանջները: Յուրաքանչյուր ուսուցիչ աշակերտին առաջադրանք տալուց հետո ստուգում է դրանց կատարումը, վերհանում սխալները, վերլուծում. փաստորեն ուսուցիչը հանդես է գալիս և՛ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպող, և՛ որպես այդ գործընթացը վերահսկող: Ներդպրոցական վերահսկողությունը, դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքին զուգահեռ շարունակական գործընթաց է:

Ներդպրոցական վերահսկողությունը.

- գործունեություն է, որը նպատակ ունի օգնել ուսուցիչներին առավել արդյունավետ կատարելու իրենց պարտականությունները և խթանելու աշակերտի առաջադիմությունը,
- դասավանդման բարելավմանն ուղղված աջակցություն է,
- ֆունկցիա է, որ համատեղում է դասավանդման արդյունավետության բաղադրիչները և համադպրոցական զարգացման միտումները,
- բարդ գործընթաց է, որ ներառում է մանկավարժների հետ խորհրդակցային կամ համագործակցային եղանակով տարվող աշխատանքները և ուղղված է դասավանդման որակի և ուսուցիչների մասնագիտական աճի բարձրացմանը:

Որքան էլ տարբեր լինեն սահմանումներն ու նրանց բացատրությունները, ակնհայտ է ու միանշանակ այն իրողությունը, որ վերահսկողությունը կրթական ոլորտի անբաժան բաղադրիչն է և ունի առանձնահատուկ դեր ու նշանակություն:

<u>Ներդպրոցական վերահսկողության նպատակն է՝</u> ստանալ ամբողջական և համակողմանի տեղեկատվություն դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի մասին, և առաջացող խնդիրները լուծել համար ժամանակին անհրաժեշտ փոփոխություններ կատարել:

- Հաստատությանը ներկայացվող արդի պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպում՝ ըստ տեղեկատվական բազայի վերլուծության,
- Չափորոշչային պահանջներին համապատասխան սովորողների կրթական մակարդակի ապահովում,
- Ուսուցիչների մեթոդական աջակցության տրամադրում,
- Թերությունների և դժվարությունների վերհանում և շտկում, առաջավոր փորձի փոխանակում և տարածում:

<u>Ներդպրոցական վերահսկողության հիմնական խնդիրներն են</u>.

- առարկայի ծրագրի կատարողականի պարբերական ստուգում,
- դասվանդվող առարկաների արդյունքների վերահսկողություն,
- աշակերտների կողմից գիտելիքների յուրացման գործընթացի փուլային վերահսկողություն, որի ընթացքում պարզվում է նրանց գիտելիքների մակարդակը, հմտությունների և կարողությունների տիրապետումը, ինքնուրույն սովորելու կարողությունը,
- ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման ժամանակ ուսուցիչներին անհրաժեշտ օգնության տրամադրում,
- ուսուցիչների փորձի ուսումնասիրություն,
- դպրոցի բոլոր տեսակի պլանների կատարման մշտական վերահսկողություն, վարչական որոշումների կայացում:

Ներդպրոցական վերահսկողության արդյունքում կազմվում է տեղեկանք: Այն պետք է արտացոլի.

— վերահսկողության հիմքը (դպրոցի աշխատանքային պլան, հրաման, հանձնարարական և այլն).

— տեղեկատվության ստացման աղբյուրները (հարցաթերթիկ, ուսումնասիրված փաստաթղթերի ցանկը և այլն).

— կատարված դասալսումների թիվը.

— վերահսկողության պլանով տրված հարցերի պատասխանները.

— հետևություններ և առաջարկություններ:

<u>Վերահսկվող ուսուցիչը իրավունք ունի.</u>

— իմանալ վերահսկողության տևողությունը և աշխատանքի գնահատման չափանիշները,

— իմանալ վերահսկողության նպատակը, բովանդակությունը, տեսակները, ձևերը և մեթոդները,

— ժամանակին ծանոթանալ տնօրինության հետևություններին և առաջարկություններին.

— դիմել վերադաս մարմիններին վերահսկողության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում:

Ներդպրոցական վերահսկողությունը կիրականացվի երկու ձևով՝ անհատական և կոլեկտիվ:

Կգործածվեն ներդպրոցական վերահսկողության ներքոնշյալ տեսակները.
— Նախնական. Նախնական վերահսկողության նպատակն է ուսուցչի աշխատանքի մեջ հնարավոր սխալների կանխումը և նրա շախատանքի արդյունավետությա բարձրացումը,

— անհատական մասնագիտական. Անհատական մասնագիտական վերահսկողության նպատակն է ստուգել մեկ ուսուցչի կամ ուսուցիչների խմբի գործունեությունը որևէ կոնկրետ հարցում: Այս վերահսկողության ժամանակ ստուգողը իրավունք ունի.

1. ծանոթանալ ուսուցչի մասնագիտական պարտականությունները նկարագրող փաստաթղթերին, ուսումնականա ծրագրերին (օրինակ՝ թեմատիկ պլաններին, դասերի պլաններին, դասամատյաններին, աշակերտների տետրերին, ծնողական ժողովների արձանագրություններին)

2. կատարել մանկավարժական աշխատաքի վերլուծություն, ուսումնական գործընթացի մշտադիրկաում:

— թեմատիկ**.** Թեմատիկ վերահսկողության նպատակն է համախմբել մանկավարժական կոլեկտիվը որոշակի մանկավարժական խնդիրների լուծման համար: Վերահսկողության թեման ընտրվում է դպրոցի զարգացման և տարեկան պլանների համապատասխան, դպրոցի աշխատանքների վերլուծության արդյունքների: Վերահսկողության արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստում:

— դասարականական - ընդհանրական. Դասարանական - ընդհանրական վերահսկողության նպատակն է պարզել տարբեր ուսուցիչների ազդեցությունը տվյալ դասարանի աշախերտների վրա: Վերահսկողությունը իրականացվում է մեկ առանձին վերցված դասարանում կամ զուգահեռ դասարաններում:

— կոմպլեքս**.** Կոմպլեքս վերահսկողության նպատակն է ստանալ ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ էական ծավալի տեղեկատվություն և դրա հիման վրա իրականացնել տվյալ խնդրի բազմակողմանի վերլուծություն:

<u>Վերահսկողության ընթացքում ուսումնասիրվելու են</u>.
— տվյալ դասարանում դասավանդուղ բոլոր ուսուցիչների գործունեությունը.

— աշակերտների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում.

— ուսման նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը.

— աշակերտների և ուսուցիչների համագործակցությունը.

— հոգեբանական մթնոլորտը դասարանում:

Վերահսկողության համար դասարաններ ընտրվում են դպրոցի աշխատանքների վերլուծության արդյունքում: Վերահսկողության տևողությունը կախված է ընրված աշխատանքների ծավալից: Վերահսկողության արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստում:

Վերահսկողության համար ընտրվում է աշխատանքային խումբ: Խմբի յուրաքանչյուր անդամ ունի իր պատասխանատվությունների շրջանակը: Վերահսկողության արդյունքները քննարկելու համար հրավիրվում է արտահերթ մանկավարժական խորհրդի նիստ: